# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ

*0018, գրասենյակ՝ ք. Երևան, Տ. Մեծի պող. 23/1, փաստացի գանվելու վայր՝ ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9:, հեռ. (0037410) 29-94-50*

www.court.am

**Գործ թիվ ԵԿԴ/1438/02/12**
ԴԴ17 Ե-16806
« 22 » **հունիսի 2012թ.**

27 · 06 · 12թ

*Կարեն Թումանյանին*
*/ք.Վանաձոր, Զ«Անդրանիկի 56/8 /*

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ռ. Ափինյանի 2012 թվականի հունիսի 22-ի որոշման համաձայն՝ Արթուր Սարունցի ընդդեմ Ռուբեն Հայրապետյանի, երրորդ անձ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության՝ հրապարակային ներողություն խնդրելուն պարտավորեցնելու, պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Հիմք ընդունելով վերը նշվածը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածով՝ պատշաճ ձևով ուղարկվում են Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշումը:

***Դուք ծանուցվում եք,*** որ վերոհիշյալ քաղաքացիական գործով դատական նիստը նշանակվել է ***<u>2012 թվականի հուլիսի 25-ին, ժամը 11:00-ին (ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9, 2-րդ հարկ, դատական նիստերի դահլիճ թիվ 7)</u>*** և Դուք (Ձեր ներկայացուցիչը) նշված օրը և ժամին անձնագրով, սոցիալական քարտով և դրանց պատճեններով կանչվում եք ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան վերոհիշյալ քաղաքացիական գործով՝ **<u>որպես հայցվոր:</u>**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 79 հոդվածի 6-րդ կետի պահանջներից ելնելով՝

***Դուք տեղեկացվում եք*** վերը նշված դատական նիստին Ձեր չներկայանալու հետևանքի մասին, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն է.

*- դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողի կամ հայցվորի (դիմողի) չներկայանալը արգելք չէ գործի քննության համար:*

Միաժամանակ Դուք տեղեկացվում եք, որ ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ուղարկվող փաստաթղթերը պետք է ներկայացվեն նույն դատարանի գրասենյակ՝ ***<u>ք. Երևան, Տիգրան Մեծի 23/1 հասցեով:</u>***

Հիմք ընդունելով վերոգրյալները՝ խնդրում եմ ներկայանալ և (կամ) ապահովել Ձեր ներկայացուցչի մասնակցությունը գործով նշանակված վերոհիշյալ դատական նիստին:

*Կից՝ հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը դատաքննության նախապատրաստելու մասին որոշումը «1» թերթից:*

***Դատավորի օգնական՝*** *Հրանուշ Մկրտչյան*

***<u>Գործ թիվ ԵԿԴ/1438/02/12</u>***

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

**22 հունիսի 2012թ.** **ք.Երևան**

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ռ. Ափինյանս, ծանոթանալով Արթուր Սաքունցի ընդդեմ Ռուբեն Հայրապետյանի, երրորդ անձ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության՝ հրապարակային ներողություն խնդրելուն պարտավորեցնելու, պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին հայցադիմումին.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ, 87-րդ և 88-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 90-րդ, $111^1$-րդ, 144-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, $144^1$-րդ հոդվածի 2-րդ մասով, 145-րդ հոդվածով $149^5$-րդ և $149^8$-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Արթուր Սաքունցի ընդդեմ Ռուբեն Հայրապետյանի, երրորդ անձ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության՝ հրապարակային ներողություն խնդրելուն պարտավորեցնելու, պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ և ***<u>գործը դատաքննության նախապատրաստելու համար հրավիրել նախնական դատական նիստ 2012 թվականի հուլիսի 25-ին, ժամը «11:00»-ին, դատարանում:</u>***

Որոշումը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել գործին մասնակցող անձանց:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԴԱՏԱՎՈՐ Ռ. ԱՓԻՆՅԱՆ